ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«17» փետրվարի 2017թ.

Հաստատում եմ՝
«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի
պետ _____ Մ. Անանյան

ՍՑ-ԳԲԽ-07/17 բողոքը քննող
հանձնաժողովին

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով և ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 17.01.2017թ. թիվ 03/73-3/508-17 գրությամբ ներկայացված «Մակրո ֆուդ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 00886056) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հարցը, պարզել ենք հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Նորքի տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի 04.05.2016թ. թիվ 150 գրության հիման վրա, 10.05.2016թ. թիվ 1/73-3/13864-16 գրությամբ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ՝ Կենտրոն) խնդրելով ուսումնասիրել «Մակրո ֆուդ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում

ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ վերը նշված մասնակցին Ցուցակում ներառելու համար:

«Նորքի տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ը 04.05.2016թ. թիվ 150 գրությամբ ներկայացրել է «ՆՏԻ-ՇՀԱՊՁԲ-16/2» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին վերաբերող փաստաթղթերը:

Կենտրոնը 15.11.2016թ. թիվ 01/04.1/4131-16 գրությամբ Նախարարության 10.05.2016թ. թիվ 1/73-3/13864-16 գրության հիման վրա «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում կատարված ուսումնասիրության արդյունքում կազմել է եզրակացություն, որով արձանագրվել է, որ «ՆՏԻ-ՇՀԱՊՁԲ-16/2» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի շրջանակում «Մակրո ֆուդ» ՍՊԸ-ն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պարտավորություն չի խախտել:

Սակայն, ՀՀ ֆինանսների նախարարությունը 17.01.2017թ. թիվ 03/73-3/508-17 գրությամբ հայտնել է, որ անհրաժեշտ է նախաձեռնել «Մակրո ֆուդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ, քանի որ Ընկերությունը Ընթացակարգի շրջանակներում ճանաչվել է ընտրված մասնակից, սակայն չի ներկայացրել որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը:

2. «Մակրո ֆուդ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

Կենտրոնը 12.05.2016թ. թիվ 01/04.1/1838-16 գրությամբ կարծիք ստանալու նպատակով դիմել է «Մակրո ֆուդ» ՍՊԸ-ին:

«Մակրո ֆուդ» ՍՊԸ-ն 26.05.2016թ. գրությամբ Կենտրոնին է ներկայացրել Ընկերության առարկությունները:

Կենտրոնը 27.05.2016թ. թիվ 01/04.1/2050-16 գրությամբ Պատվիրատուին է ներկայացրել «Մակրո ֆուդ» ՍՊԸ-ի 26.05.2016թ. գրության պատճենը:

3. «Նորքի տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Նորքի տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ը 03.06.2016թ. թիվ 174 գրությամբ հայտնել է, որ 14.04.2016թ. «Մակրո ֆուդ» ՍՊԸ-ն ծանուցվել է, վերջինիս է ներկայացվել պայմանագրի նախագիծը, որպեսզի 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնի որականորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը, իսկ անգործության ժամկետի ավարտից հետո՝ իր կողմից կնքված և ստորագրված պայմանագրի 2 օրինակ, սակայն «Մակրո ֆուդ» ՍՊԸ-ն չի ներկայացրել, նույնիսկ այդ մասին հեռախոսազանգով առաջարկվել է ներկայացնել, սակայն անտարբերություն է դրսևորվել:

Պատվիրատուն նշել է նաև, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 25.04.2016թ. ՀՀ կառավարության 10.02.2015թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգով (այսուհետ նաև՝ Կարգ) սահմանված ժամկետում փաստաթղթային հիմնավորումները չներկայացնելու հիմքով Ընթացակարգի 54-րդ չափաբաժնով հաղթող է ճանաչել 2-րդ տեղը զբաղեցրած մասնակցին:

4. ՍՑ-ԳԲԽ-07/17 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՀՀ ֆինանսների նախարարության 17.01.2017թ. թիվ 03/73-3/508-17 գրությամբ ներկայացված «Մակրո ֆուդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Նորքի տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպվել է «ՆՏԻ-ՇՀԱՊՁԲ-16/2» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու

ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Մակրո ֆուդ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.04.2016թ. թիվ 3 արձանագրության՝

- 4.3 կետի համաձայն՝ որոշվել է Ընթացակարգի 54-րդ չափաբաժնով ընտրված մասնակից ճանաչել «Մակրո ֆուդ» ՍՊԸ-ին:
- 4.4 կետի համաձայն՝ հայտարարվել է անգործության ժամկետ՝ 10 օրացուցային օր: Անգործության ժամկետի ավարտին հաջորդող 5 օրացուցային օրվա ընթացքում ընտրված մասնակցի հետ կկնքվի գնման պայմանագիր:

3. Փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել 25.04.2016թ. ժամը 10:00-ին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.04.2016թ. թիվ 4 արձանագրության՝

- 3.1 կետի համաձայն՝ «Մակրո ֆուդ» ՍՊԸ-ն չի ներկայացրել որակավորման չափանիշը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:
- 3.2 կետի համաձայն՝ որոշվել է «Մակրո ֆուդ» ՍՊԸ-ի հայտը մերժել:

4. ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը՝ ի դեմս ՍՑ-ԳԲԽ-11/16 բողոքը քննող հանձնաժողովի, 29.12.2016թ. որոշմամբ «Մակրո ֆուդ» ՍՊԸ-ին ներառել է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կայացվելու օրվանից հաշված վեց ամիս ժամկետով:

5. ՍՑ-ԳԲԽ-07/17 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը

Կենտրոնն, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 10.05.2016թ. թիվ 1/73-3/13864-16 և 17.01.2017թ. թիվ 03/73-3/508-17 գրությունները, «Նորքի տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ը 04.05.2016թ. թիվ 150 և 03.06.2016թ. թիվ 174 գրությունները և

կից փաստաթղթերը, «Մակրո ֆուդ» ՍՊԸ-ի 26.05.2016թ. Կենտրոնին ուղղված գրությունը, «ՆՏԻ-ՇՀԱՊՁԲ-16/2» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու նպատակով Ընկերության ներկայացրած հայտը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո՝ հրավերով սահմանված ժամկետում՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

Օրենքի 31-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ հայտը գնահատվում է բավարար, եթե նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները: Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված:

Օրենքի 33-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ընտրված մասնակիցը հայտարարվելուն հաջորդող երկու օրացուցային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

ՀՀ կառավարության 10.02.2015թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի

քարտուղարն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, իսկ ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը: Նույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդող տեղը զբաղեցրած մասնակցին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.04.2016թ. թիվ 3 արձանագրության՝

- 4.3 կետի համաձայն՝ որոշվել է Ընթացակարգի 54-րդ չափաբաժնով ընտրված մասնակից ճանաչել «Մակրո ֆուդ» ՍՊԸ-ին:
- 4.4 կետի համաձայն՝ հայտարարվել է անգործության ժամկետ՝ 10 օրացուցային օր: Անգործության ժամկետի ավարտին հաջորդող 5 օրացուցային օրվա ընթացքում ընտրված մասնակցի հետ կկնքվի գնման պայմանագիր:

Փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել 25.04.2016թ. ժամը 10:00-ին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.04.2016թ. թիվ 4 արձանագրության՝

- 3.1 կետի համաձայն՝ «Մակրո ֆուդ» ՍՊԸ-ն չի ներկայացրել որակավորման չափանիշը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:
- 3.2 կետի համաձայն՝ որոշվել է «Մակրո ֆուդ» ՍՊԸ-ի հայտը մերժել:

Այսպիսով, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 14.04.2016թ. թիվ 3 արձանագրությամբ որոշել է Ընթացակարգի 54-րդ չափաբաժնով ընտրված մասնակից ճանաչել «Մակրո ֆուդ» ՍՊԸ-ին, որից հետո սահմանվել է անգործության ժամկետ և արձանագրվել է, որ անգործության ժամկետի ավարտին հաջորդող 5 օրացուցային օրվա ընթացքում ընտրված մասնակցի հետ կկնքվի գնման պայմանագիր, այնուհետև արդեն 25.04.2016թ. թիվ 4 արձանագրության 3.1 կետով արձանագրվել է, որ «Մակրո ֆուդ» ՍՊԸ-ն չի ներկայացրել որակավորման չափանիշը հիմնավորող՝ հրավերով

նախատեսված փաստաթղթերը և այդ հիմքով որոշվել է «Մակրո ֆուդ» ՍՊԸ-ի հայտը մերժել:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ Պատվիրատուի կողմից խախտվել են Օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետով, Օրենքի 31-րդ հոդվածի 6-րդ մասով, Օրենքի 33-րդ հոդվածի 2-րդ մասով, Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջները, քանի որ մասնակիցը հայտարարվում է ընտրված այն դեպքում, երբ հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները) բավարարում են հրավերով սահմանված պահանջները:

Մինչդեռ, Պատվիրատուն առանց գնահատելու «Մակրո ֆուդ» ՍՊԸ-ի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները) հրավերով սահմանված պահանջներին բավարարելը, սահմանել է անգործության ժամկետ և պայմանագրի նախագիծ է ուղղարկել, որից հետո մերժել է «Մակրո ֆուդ» ՍՊԸ-ի, քանի որ վերջինս չի ներկայացրել որակավորման չափանիշը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Անհրաժեշտ է նշել, որ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը՝ ի դեմս ՍՏ-ԳԲԽ-11/16 բողոքը քննող հանձնաժողովի, 29.12.2016թ. որոշմամբ «Մակրո ֆուդ» ՍՊԸ-ին ներառել է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կայացվելու օրվանից հաշված վեց ամիս ժամկետով:

Սակայն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալ դեպքում Պատվիրատուն խախտել է Օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետով, Օրենքի 31-րդ հոդվածի 6-րդ մասով, Օրենքի 33-րդ հոդվածի 2-րդ մասով, Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջները, ուստի «Մակրո ֆուդ» ՍՊԸ-ին, ՀՀ ֆինանսների նախարարության 17.01.2017թ. թիվ 03/73-3/508-17 գրության հիման վրա, գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառված լինելու ժամկետը երկարաձգելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք ՀՀ ֆինանսների նախարարության 17.01.2017թ. թիվ 03/73-3/508-17 գրությամբ ներկայացված «Մակրո ֆուդ» ՍՊԸ-ն (ՀՎՀՀ՝ 00886056) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը մերժել:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Պետի տեղակալ Հ. Այունց

Գնումների բողոքարկման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի գլխավոր մասնագետ՝ ՍՑ-ԳԲԽ-07/17 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Լ. Հովակիմյան